Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24935

331.881
Ա-21

[1931]

331.881
Ա-21

05 JAN 2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊՐՈՖԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

## ԲԱՄԲԱԿԻ 1931 Թ. ԿՈՆՏՐՈԼԱՅԻՆ ԹՎԵՐԻ ՅԵՎ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումի՝ XVI կուսհամագումարի վորոշումների հիման վրա նըշած բոլշևիկյան ծրագիրը—հետագայում քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի մնացորդների վրա ամբողջ ֆրոնտով սոցիալիստական ծավալուն հարձակում գործելու, կուլակությունը—վորպես դասակարգ՝ համատարած կոլլեկտիվացման հիման վրա վոչնչացնելու և վճռականորեն պայմաններ նախապատրաստելու համատարած կոլլեկտիվացման համար ու այդ հիման վրա Ադրբեջանում կուլակությունը, վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկել, իր ամբողջ պարզությամբ հաստատեց ինչպես աջ, նույնպես և ձախ թեքումներին կուսակցության և նրա Կենտկոմի հիմնական գծի ճիշտ լինելը, վոր ել ավելի է պահանջում աշխատավոր մասսաների ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել՝ Ադրբեջանի ռայոններում 1931 թ. հարվածային կարգով 205,000 հեկտար*

22 FEB 2013

24935



բամբակ ցանելու և բամբակային ռայոններում տնտեսությունների 50% կոլեկտիվացման պլանի անպայման իրագործելու համար։

205,000 հեկտար բամբակ ցանելու և բամբակային ռայոններում տնտեսությունների 50% կոլեկտիվացնելու պլանի իրագործումը կվորոշի 5-ամյակի 3-րդ տարում Ադրբեջանի գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողությունը և կապահովի Խորհրդային Միության բամբակի հարցում կապիտալիստական յերկրներից կախում ունենալուց ազատվելը։

Պայքարը դրա համար պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին, վոր գարնանացանի կամպանիան կերպարանափոխեն տնտեսական-քաղաքական լայն կամպանիայի՝ բանվոր դասակարգի, կոլխոզնիկների և չքավոր-միջակային մասսաների աշխատանքային վերելքի հիման վրա։

Յելնելով դրանից, խորհրդակցությունը անհրաժեշտ է գտնում հետևյալ միջոցները ձեռք առնել.

1. 1931 թ. 205.000 հեկտար բամբակի ցանքսի և բամբակային ռայոններում չքավոր և միջակ անհատական տնտեսությունների 50%-ը կոլխոզներում գրավելու կոնտրոլային թվերը անհրաժեշտ է հարվածային կարգով իրագործել վորոշված ժամկետին, իսկ դրա համար բամբակային ռայոնների պրոֆմիութենական կազմակերպությունները և պրոֆմիութենական հանրապետական կազմակերպությունները պարտավորություն են առնում իրենց վրա ստեղծել բոլոր պայմանները նրա համար, վորպեսզի իրագործվի ՎԵԿԱ-ՊԵ-ի (բ), Անդրյերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկո-

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐ-ՊԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ-Арм ССР

56677-66



մի նախագծած 205,000 հեկտար բամբակ ցանելու ծրագիրը ու իրենց մոբիլիզացիայի են յենթարկում այդ միջոցառումները անցկացնելու համար։

2. Աչքի առաջ ունենալով, վոր շեֆային աշխատանքը, վորը տարվել է մինչև հիմա, գյուղական տնտեսության զարգացման և վերակառուցման տվյալ ետապում չի կարող բավարարել վոչ կազմակերպչորեն և վոչ էլ աշխատանքի իր բովանդակությամբ, խորհրդակցությունը անհրաժեշտ է համարում, վոր փետրվարի 5-ից մինչև փետրվարի 15-ը պրոֆմիութենական կազմակերպությունները Ադրպրոֆխորհրդի նախագահության 1931 թ. հունվարի 8-ի վորոշումների հիման վրա արմատական վերակառուցման յենթարկեն շեֆային աշխատանքները։

3. Ադրբեջանի շեֆային բազաներն ու պրոֆկազմակերպություններն անմիջապես պիտի ձեռնարկեն բանվորների ու ծառայողների ժողովում, յենթաշեֆ գյուղի ներկայացուցչի ներկայությամբ լայն կերպով քննելու յենթաշեֆ ռայոնի և գյուղի հնձի կամպանիայի նախապատրաստության և կոլեկտիվացման պլանները, վորից հետո անհրաժեշտ է փոխադարձ պարտավորություններով՝ սոցիալիստական մրցության պայմանագրեր կնքել, լավ հիշելով, վոր յենթաշեֆ ռայոնի, գյուղի, կոլխոզի և այլն ցանքային պլանի և տարեկան պլանի չկատարելու պատասխանատվությունը ընկնում է շեֆության անող հիմնարկության և ձեռնարկության վրա՝ յենթաշեֆ ռայոնի կազմակերպությունների հետ միասին։

4. Աչքի առաջ ունենալով այն, վոր արդյունաբերության մեջ բավականին բանվորական նոր կադ-

ների մեծ հոսանք կա, վորոնք կապված են գյուղական անտեսության հետ և վորոնց մի մասը դեռևս կոլխոզներից դուրս է մնացած, առաջարկել միությունների կենտրոնական վարչություններին, Բաքվի շեֆային խորհրդի հետ միասին, աշխատանք ծավալել բանվորների այդ մասը կոլխոզներում գրավելու համար, կազմակերպել բանվորական հայրենակցական միություններ, գյուղի հայրենակիցներին լավագույն կոլեկտիվ նամակ գրելու համար մրցանակներ տալ, մեծ թվով բանվորներին կոլխոզներ գրավելու սոցիալիստական մրցություն ծավալել և այլն։

5. Ռայոնական պրոֆխորհուրդները, գյուղատընտեսական բանվորների միությունը, միությունների կենտրոնական վարչությունները վերից վար և ռայոնական կոլխոզցենտրերը միմիանց հետ սոցիալիստական մրցություններ պիտի ծավալեն՝ մասսաների լավագույն կերպով կազմակերպելու և բամբակի գարնանային ցանքային կամպանիան լավագույն կերպով անցկացնելու համար։

6. Ռայոնական պրոֆխորհուրդներն, գյուղատընտեսական բանվորների միությունը և ռայոնական կոլխոզցենտրերը փետրվարի 20-ից վոչ ուշ պիտի ավարտեն ցանքային պլանը գյուղին, կոլխոզին, սովխոզին, մեքենա-տրակտորային կայանին, առանձին կոլխոզնիկին ու ծխին հասցնելը, նախորոք քննության առնելով չքավորության ժողովներում, գյուղի համայնական լայն ժողովներում, կոլխոզնիկների ժողովներում, արտադրական խորհրդակցություններում և իրենց նիստերում, նույնպես և այն կազմակերպությունները, վորոնք գյուղում են աշխատում,



ընդհանուր պլանների հիման վրա պիտի կազմեն գարնանացանի բամբակային կամպանիայում իրենց մասնակցության ոպերատիվ պլանները։

7. Ռայոնական պրոֆխորհուրդներն ու գյուղատնտեսական բանվորների միությունը լավագույն չքավորներից, բատրակներից, միջակներից և կոլխոզնիկներից, ներ գրավելով և գյուղի կուլտուրական ուժերին (ուսուցիչներին, բժիշկներին, խրճիթվարներին և այլն) նախաձեռնող խմբակներ պիտի կազմեն գյուղի լավագույն մասը կոլխոզներում, արտադրական կոոպերացիայում, հողը միասին մշակող ընկերություններում ներգրավելու համար։

8. Ջրատնտեսական միջոցառումների առաջադրությունները ապահովելու նպատակով (պայքար կուլակի դեմ և ջրբաշխման գործում դասակարգային գծի ապահովում) գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են ջրային խորհուրդներ. — ռայոնական պրոֆխորհուրդները ու գյուղատնտեսական բանվորների միությունը պետք է ապահովեն նրանց մեջ կոլխոզնիկների, բատրակների ու չքավոր-միջակային ակտիվի լավագույններով, նույնպես և մասնակցություն ունենալով ջրային լիազորների ինստիտուտ ստեղծելու գործում, դրա համար ընտրելով դասակարգային տոկուն, ակտիվ կոլխոզնիկների, չքավորների և միջակների։

9. Ջրային խորհուրդների և ջրա-լիազորների աշխատանքների հիմնական միջոցառումները պետք է լինեն. —

ա) անմիջապես պետք է ջրելու պլան կազմեն գյուղխորհուրդ մտնող ամեն մի բնակելի կետի հա-

մար առանձին, և հասցնեն այն ամեն մի կոլխոզի, սովխոզի և գյուղերում ջրից օգտվողին, անհատական տնտեսություն ունեցող չքավորին ու միջակին.

բ) հաստատ ժամկետներ սահմանեն առանձին կոլխոզների, գյուղերի, տնտեսությունների ջրելու սկզբի և վերջացնելու համար.

գ) անընդհատ և գիշերով ջրելու գործը կազմակերպել.

դ) ռայոնական պրոֆխորհուրդներն ու գյուղատնտեսական բանվորների միությունը վորոգման սիստեմի մաքրելու միամսյակին, վորը սկսվեց փետրվարի 1-ից և տևելու է մինչև մարտի 1-ը, պետք է կազմակերպել բատրակներից հարվածային բրիգադներ, նրանց միջոցով գրավելով գյուղի չքավոր-միջակային մասը և կոլխոզնիկներին, միաժամանակ վճռական պայքար տանելով կուլակի դեմ, վորպեսզի նա կատարի այն առաջադրությունները, վորը ներկայացրել է նրան խորհրդային կառավարությունը, թույլ չտալով վորպեսզի կուլակներն ու նրանց համախոհները ներս խցկվեն ջրային խորհուրդներն և ջրա-լիազորների ինստիտուտի մեջ.

ե) ռայոնական ջրային տնտեսությունների ապարատները ամրապնդելու նպատակով, առաջարկել ռայոնական պրոֆխորհուրդներին և գյուղատնտեսական բանվորների միությանը ապահովել այդպիսիները լավագույն, դասակարգային տոկուն բատրակներով, կոլխոզնիկներով, չքավորներով ու միջակներով, միաժամանակ ռայոնական ջրային տնտեսությունների աշխատանքների մեջ գրավելով գյուղում գտնվող միության անդամների մասսային:



10. Քանի վոր հողային օրգանները մինչև հիմա դեռևս չեն ավարտել բամբակային ցանքսերին հատկացնվող հողերի հողաշինարարական աշխատանքները, վորը հնարավորություն չի տալիս ամբողջովին բեռնավորել տրակտորային ուժը՝ Հողժողկոմատը և հողային օրգանները բամբակային ռայոններում այն բոլոր աշխատանքները պետք է ավարտեն ինչպես հին, նույնպես և նոր մեքենա-տրակտորային կայաններում մինչև 1931 թ. մարտի 15-ը:

11. Գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի ամենակարևոր լծակներից մեկը հանդիսանում է արտադրական պայմանագրությունը, վորը գարնանային կամպանիային պետք է հիմնական տեղը գրավի, ուստի ռայոնական պրոֆխորհուրդները, գյուղատնտեսական բանվորների միությունն և բամբակային բոլոր կազմակերպությունները, գյուղխորհուրդների հետ միասին պետք է զբաղվեն պայմանագրման պարտավորությունների իրագործման սիստեմատիկ կերպով վերահսկողության յենթարկելու գործով, վորի համար պետք է—

ա) ստուգեն թե ամեն մի տնտեսություն իր արտադրական հնարավորություններով վորքան է կարողանում ապահովել ցանքսի վերաբերյալ իր վրա առած պարտավորությունների իրականացումը.

բ) հասարակական վերահսկողության տակ դնել այդ պայմանագրությունների իրագործումը և պայմանագրությունների ամբողջ աշխատանքը ավարտել 1931 թ. մարտի 15-ից վոչ ուշ:

12. ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Խորհրդային Միության Ժողկոմխորհի վորոշման հիման վրա բամ-

բակաբուծների հետ պայմանագիր կնքելիս հետևյալ կարգն է սահմանվում. 20% տրվում է ցանքսից առաջ, 30% առաջին բուկ տալուց հետո և 50%-ը յերրորդ անգամ բուկ տալուց առաջ, և դրա համար առաջարկվում է ռայոնական պրոֆխորհուրդներին և գյուղատնտեսական բանվորների միությանը հասարակական հսկողության տակ առնել պայմանագրվողներին ֆինանսավորելու գործը, թույլ չտալով այդպիսին 3-րդ անգամ բուկ տալուց առաջ, յեթե չեն կատարված առաջին յերկու անգամ բուկ տալու պայմանները։

13. Բամբակի բերքը բարձրացնելու նպատակով կուլտուրայի տեխնիկական նորագույն ձևերը գործադրելով, բամբակային կազմակերպությունները Անդրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագվի Կոմիտեի վորոշումը՝ 90.000 հեկտար շարքացան անելու մասին—պետք է կատարեն իր ժամանակին, միաժամանակ առաջարկել ռայոնական պրոֆխորհուրդներին և գյուղատնտեսական բանվորների միությանը, վոր նրանք իրենց հսկողության տակ առնեն այդ վորոշման իրագործումը, ուղղելով այն հետևյալ գծով.

ա) գյուղացիների ու կոլխոզնիկների ընդհանուր ժողովներում լայն բացատրական կամպանիաներ տանել շարքացան անելու նպատակի ու խնդիրների մասին, ներգրավելով դրա մեջ ամբողջ ռայոնի ագրոնոմիական անձնակազմը.

բ) բատրակներից ու կոլխոզնիկներից պետք է բրիգադներ կազմել, վորպեսզի հետևեն իր ժամանակին հողային բաժինների առանձնացնելուն, վորի համար ժամկետը վորոշված է փետրվարի 10-ին.



գ) միջանցիկ բրիգադների կազմակերպությունների միջոցով հսկողության տակ առնել բամբակի ինվենտարի, գյուղատնտեսական մեքենաների, ձիերի, անասունների կերի ներմուծումն և նրանց օգտագործումն ու բաշխումը։

14. Բամբակի բերքը բարձրացնելու նպատակով պետությունը բամբակ ցանողներին տալիս է ցանքսային պարարտանյութեր, վորոնց արժեքը նա ստանալու է սահմանված ժամկետներին։ Ռայոնական պրոֆխորհուրդներին ու գյուղատնտեսական բանվորների միությանը առաջարկվում է բացատրական կամպանիա տանել պարարտանյութերի նշանակության մասին, միևնույն ժամանակ հսկողության տակ առնել նրա բաշխումն ու օգտագործումը։

15. Ռայոնական պրոֆխորհուրդներն ու գյուղատնտեսական բանվորների միությունը մասսայական բացատրական աշխատանքներ տանելու հետ միաժամանակ, մյուս հարցերի հետ միասին, պետք է բամբակային ցանքսերի տարածությունների ընդլայնման հարցը դնեն՝ անպայման և վճռականորեն բամբակային ռայոններից հացահատիկային կուլտուրաների դուրս մղելու և նոր հողաբաժիններ ընտելացնելու հաշվին։

16. Ռայոնական պրոֆխորհուրդները, գյուղատնտեսական բանվորների միությունը և ռայոնական կոլխոզցենտրը 15-օրյակի ընթացքում (փետրվարի 20-ից մինչև մարտի 5-ը) պետք է ստուգեն գյուղի, կոլխոզի, սովխոզի, մեքենա-տրակտորային կայանների ցանքսի համար պատրաստ լինելը, հիմնականում դնելով հետևյալ հարցերը.

ա) ցանքսի պլանը մինչև կոլխոզը, գյուղը, կոլխոզնիկը և ծուխը հասցնելը·

բ) ինվենտարով, քարշուժով ապահոված լինելը·

գ) վոռոգման սիստեմի պատրաստ լինելը·

դ) աշխատանքի կազմակերպումը, ոպերատիվ պլանները և այլն:

17. Ռայոնական պրոֆխորհուրդները սիստեմատիկ կերպով ստուգում են բամբակի գարնանային ցանքսի նախապատրաստական միջոցառումների իրագործումը յեվ ամեն մի տասնօրյակում տեղեկացնում են Ադրբեջանի պրոֆխորհրդին նրանց ընթացքի մասին:

18. Բամբակային ռայոններում պրոֆկազմակերպությունների ուժեղացման նպատակով անհրաժեշտ է պրոֆպրոցի կուրսանտների կազմից մի մասը մշտական աշխատանքների ուղարկել ռայոնները, իսկ գարնանային ցանքսի համար լավագույն նախապատրաստվելու, բամբակային խոշոր սովխոզներին ու մեքենա-տրակտորային կայաններին օգնելու համար մոբիլիզացիայի յենթարկել Բաքվի պրոֆաշխատավորներին ցանքսային նախապատրաստական աշխատանքների ամբողջ ժամանակի ընթացքում՝ 1931 թ. փետրվարի 10-ից մինչև մարտի 10 ը:

19. Ցանքսային պլանը բոլոր ցուցանիշներով իրականացրած բամբակի ռայոնին խրախուսելու նպատակով, խնդրել Ադրպրոֆխորհրդից անցողիկ կարմիր դրոշ կազմակերպել, իսկ Հողժողկոմատին, Փամբուղբրիլիգիին և Կոլխոզցենտրին՝ առանձին ֆոնդ ստեղծել՝ պրեմիա տալու համար:



20. Բամբակի կամպանիան հաջող կերպով նախապատրաստելու ու տանելու համար, Ադրբեջանի պրոֆկազմակերպությունները պետք է ապահովեն.—

1. Մետաղագործների միությունը—գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգումը և պահեստի մասերի իր ժամանակին պատրաստելը:

2) Հանքագործների միությունը—իր ժամանակին վառելիքով և յուղերով ապահովել մեքենա-տրակտորային կայանները ու ջրմուղները:

3) Տրանսպորտնիկների միությունը—իր ժամանակին ապահովել բամբակի ռայոնների համար բեռների տեղափոխության գործը:

4) Սննդագործների ու խորհրդային ծառայողների միությունները—ապահովել բամբակի ռայոններին սննդի և արդյունաբերական ապրանքների մատակարարումը:

5) Մեդսանտրուդ միությունը—ապահովել բամբակային ռայոնները բժշկական սպասարկումով:

6) Լուսաշխատավորների միությունը—ապահովել բամբակային ռայոնները կուլտուրական ուժերով՝ կոլլեկտիվացման և բամբակային խնդիրների պրոպագանդա անելու համար:

7) Քիմիկոսների միությունը—ապահովել բամբակային ռայոնները իր ժամանակին քիմիական պարարտանյութերով:

8) Կապի միությունը—բամբակային ռայոնները ռադիոֆիկացիայի յենթարկել, նորմալ պայմաններ ստեղծելով փոստի և հեռագրի աշխատանքների համար:

9) Կառուցողների միությունը—ապահովել իր ժամանակին կառուցումները:

10) Գեղաշխի միությունը—բամբակային ռայոնները ապահովել ագիտացիոն-գեղարվեստական աշխատանքների սպասարկումով։

11) Տպագրիչների միությունը—ապահովել շըրջիկ տպարանների սպասարկությունը և մամուլի մեջ բամբակի հարցերի պարբերաբար լուսաբանությունը։

12) Մանածագործների միությունը—ապահովել սերմացուի տարան (ամանեղեն) և բամբակային գործարանների աշխատանքը։

21. Մարտի սկզբում Ադրբեջանի պրոֆխորհրդի նախագահությունը պետք է լսի խոշոր բամբակային ռայոնների ու մեքենա-տրակտորային կայանների ռայոնական պրոֆխորհուրդների զեկուցումները՝ գարնանային բամբակի ցանքսի կամպանիայի վերաբերյալ յեղած դիրեկտիվների իրագործման և նախնական ստուգման խնդիրների մասին։

---

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊՐՈՖԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

## 1931 Թ. ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ՌԱՅՈՆՆԵՐԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության և կառավարության կողմից տրված բամբակի կրկնակի ցանքսի ծրագրի (205.000 հեկտար) իրագործման խնդիրը աշխատանքի օրգանների ու պրոֆմիությունների վրա հատուկ պատասխանատվություն է դնում՝ բամբակային բոլոր տնտեսությունները լրիվ կերպով և իր ժամանակին բանվորական ուժով ապահովելու համար։

2. 1930 թ. բամբակային ռայոններին բանվորական ուժով ապահովելու գործում յեղած ընդհատումների հիմնական պատճառներն են.—1) տեղական բանվորական ուժի ավելցուկը մեծագույն չափով օգտագործելու փոխարեն, ծանրության կենտրոնը ներմուծվող բանվորական ուժի վրա տեղափոխելը, 2) տնտեսական օրգանների անպատրաստ լինելը՝ հավաքված բանվորական ուժի ընդունելու և տեղավորելու գործում, 3) պահանջվող բանվորական ուժի մասին Աշխժողկոմատին շատ ուշ պահանջներ ներկայացնելը և ժամկետների ու պահանջվող բանվորական ու-

ժի չափերի մասին հիմնավորված տվյալների բացակայությունը, 4) Աշխատանքի ժողկոմատի օրգանների կողմից հավաքվող բանվորական ուժի վոչ-բավարար ընտրությունը, պրոֆեսսիոնալ, խորհրդային և կոլխոզային կազմակերպությունների չափազանց թույլ. մասնակցությունը՝ բանվորների հավաքման, տեղափոխման և տեղավորման ամբողջ աշխատանքի մեջ։

Առաջիկայում բամբակային կազմակերպություններին բանվորական ուժ մատակարարելու աշխատանքներում այդ ամենը պետք է հաշվի առնվի և վերացնվի։

3. Սահմանել բանվորական ուժով ապահովելու հետևյալ կոնտրոլային թվերը.

ա) «Կարա-Զալա» սովխոզին.

բ) Փամբուղբիրլիգիի սիստեմին.

գ) Ազվոդխոզին.

դ) «Գյաուր-Արխ» սովխոզին, Աղիջբեկովի անվան և Բողարայինին։

Սահմանել, վոր բացի Ազվոդխոզի սիստեմից, բոլոր մյուս սիստեմներում պետք է լինեն 30% վոչ պակաս կին-բանվորուհիներ։

Կանանց գործի մեջ գրավելը պարտավորեցնում բոլոր կազմակերպություններին բամբակի ջրելու և քաղհանի ժամանակ բանվորուհիների յերեխաների համար կազմակերպել մսուրներ՝ 100 կետից վոչ պակաս. մանկական հիմնարկությունների պահելու ծախսերը խորհրդակցությունը գնում է Լուսժողկոմատի, Առողջժողկոմատի, պրոֆմիությունների, Ազերխատիֆակի, Կոլխոզցենտրի, սովխոզների, Փամբուղբիրլիգիի, Սոցպայի, և մյուս շահագրգռված կազմակերպությունների վրա։



Ագրպրոֆխորհուրդը վերոհիշյալ կազմակերպությունների հետ միասին ամբողջ աշխատանքը պետք է այնպես տանի, վորպեսզի առաջին անգամ ջրելու ժամանակ ապահովված լինի բանվորուհիների բոլոր յերեխաների լրիվին սպասարկումը։

4. Հաշվի առնելով առանձին անտեսական օրգանների կողմից Աշխժողկոմատի հետ պայմանագիր կընքելու գործում ձգձգումներ առաջացնելը (Փամբուղբիրլիգի, «Գյավուր-Արխ» սովխոզի, Բաղարայինը, Աղիջբեկովի անվ.), առաջարկել փետրվարի 10-ից վոչ ուշ պայմանագրերը կնքելու գործը ավարտել։

5. Բանվորական ուժի հեռավոր տեղափոխություններից ազատելու համար, առաջարկել Աշխժողկոմատին, վորպեսզի նա Կոլխոզցենտրի հետ միասին հենց հիմա սկսեն վորոշել բանվորական ուժ հավաքելու ռայոնները։ Միաժամանակ առաջարկել Աշխժողկոմատին իր ժամանակին ապահովել՝ լրիվին աշխատունակ և ճկուն հավաքման ապարատի կազմակերպումը, բանվորական ուժ հավաքելու ամբողջ աշխատանքին տալով լայն մասսայական-քաղաքական կամպանիայի բնավորություն։

Խորհրդակցությունը միանգամայն անթույլատրելի է գտնում բանվորական ուժի հավաքման ժամանակ Աշխժողկոմատի աշխատավորներին ուրիշ գործերի տեղափոխելը և առաջարկում է ռայոնական պրոֆխորհուրդներին թույլ չտալ նման տեղափոխությունները, միաժամանակ միջոցներ ձեռք առնել բանվորական ուժ հավաքելու ապարատները կազմակերպել

56677-66
ՀՍՍՀ — Арм ССР
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

դասակարգային տոկուն և պատրաստված աշխատավորներից։

6. Բամբակային կազմակերպությունները բանվորական ուժով պլանային կերպով ապահովելու նպատակով, Խորհրդակցությունը հանձնարարում է Աշխժողկոմատին, գյուղատնտեսական բանվորների միության և Կոլխոզցենտրին, ա) անմիջապես սկսել բանվորների պայմանագրելը, ինչպես բամբակի ջրելու, նույնպես և հավաքելու համար. պայմանագրվածների համար մի շարք արտոնություններ սահմանել՝ ինչպես արդյունաբերական ապրանքներ ստանալու, նույնպես և սպասարկման ուրիշ տեսակների ու ձևերի վերաբերմամբ, բ) լայն կերպով անցկացնել աշխատողների կողմից ինքնաամրապնդումը. գ) սովխոզներում ստեղծել աշխատավորների մշտական կադր, դրա համար համապատասխան միջոցառումներ ստեղծելով (ընտանիքավորների համար բնակարաններ կառուցել և այլն)։

7. Խորհրդակցությունը հանձնարարում է Աշխժողկոմատին խիստ հետևել ու ստուգել այն կազմակերպությունների գործունեությունը, վորոնք պարտավոր են միջոցներ ձեռք առնել իսկապես այնպիսի պայմաններ ստեղծելու, վոր յեկող բոլոր բանվորները ապահովված լինեն բնակարանով և հասարակական սնունդով, պատասխանատվության կանչելով այն անձնավորություններին ու կազմակերպություններին, վորոնք չեն կատարում իրենց պարտականությունները։

8. Աչքի առաջ ունենալով այն, վոր 1930 թ. բամբակային կամպանիայի ժամանակ բանվորական ուժ հա-



վաքելու գործում ռայոնական պրոֆկազմակերպությունները բոլորովին անբավարար մասնակցություն են ցույց տվել, Խորհրդակցությունը այդ բոլոր աշխատանքի համար ռայոնական պրոֆկազմակերպությունների վրա պատասխանատվություն է դնում, առաջարկելով բոլոր ռայոնական պրոֆխորհուրդներին և գյուղատնտեսական բանվորների միության ռայոնական կոմիտեներին՝ լայն աջակցություն ցույց տալ Աշխժողկոմատի որգաններին բանվորներ հավաքելու և նրանց տեղափոխելու աշխատանքներում, լայն կերպով զարգացնելով սոցիալիստական մրցության և հարվածայնության մեթոդները՝ բամբակային ռայոնները բանվորական ուժով ապահովելու ամբողջ աշխատանքի մեջ։

## Աշխատանքի կազմակերպումը

Բամբակային ռայոնների կոլխոզներում, սովխոզներում աշխատանքի կանոնավոր կազմակերպումը վճռական դեր է խաղում 1931 թ. բամբակային ամբողջ կամպանիայի համար։ Խորհրդակցությունը առաջարկում է պրոֆմիություններին, Աշխժողկոմատին և բամբակային բոլոր կազմակերպություններին անցկացնել հետևյալը.

1) Անմիջապես սկսել ամեն մի շրջանի դաշտային աշխատանքների արտադրական պլանը կազմել այնպես, վորպեսզի կոլխոզների ամեն մի ծուխին նախորոք հայտնի լինի նրա ծխի (ընտանիքի) բանվորական օրերի բեռնավորումը, վորն իր հերթին վորոշ ռեզերվ կստեղծի դրսի աշխատանքի համար (սովխոզներ, արդյունաբերություն)։

2) Բոլոր կոլխոզներում և սովխոզներում մտցնել ներքին կարգավորման կանոնները. Հողժողկոմատը, Կոլխոզցենտրն ու գյուղատնտեսական բանվորների միությունը պետք է մշակեն ու հրատարակեն այդ կանոնները, լայն կերպով տարածելով աշխատավոր գյուղացիության մեջ այդ կանոնների նշանակությունը:

3) Աշխատանքի արտադրականությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով, կոլխոզներում յեկամուտների բաժանումը կատարել բացառապես գործադրած աշխատանքի վորակի և քանակի համաձայն, վճռական հակահարված տալով հավասարեցուցիչ (մարդագլուխ) վարձատրման սիստեմի անցկացնելու ամեն մի փորձին:

4) Բամբակարուծական տնտեսություններում աշխատանքի վարձատրումը կատարել բացառապես դրամական արտահայտությամբ, վորի համար Կոլխոզցենտրը, գյուղատնտեսական բանվորների միության հետ միասին պետք է մշակեն և կյանքի մեջ կիրառեն տարիֆային ցանցը (3—5 կարգ) գարնանային աշխատանքների սկզբում:

5) Բամբակի ցանքսի, ջրելու և հավաքելու ժամանակ խորհրդակցությունը կարևոր է համարում կտորով աշխատանք սահմանել: Կոլխոզցենտրն ու Հողժողկոմատը պետք է ա) շտապ կարգով Կոլխոզցենտրի ակտիվի հետ միասին դաշտերի հաշվառում կատարեն ու նրանց հողաբաժինների բաժանեն. բ) գյուղական տնտեսության մեքենաների ու գործիքների (քարշաուժ) պլանային կարգով դասավորեն գ) բոլոր կոլխոզներում կազմակերպեն նորմայացման



որգաններ (նորմայացման բյուրոներ) կոլխոզնիկների ակտիվիստներից, վորոնց հանձնարարել նորմայացման յենթարկել բանվորական ուժն և մեքենաների ու գործիքների աշխատանքը:

6) Արդյունաբերության աշխատանքի սոցիալիստական մեթոդները արագ կերպով բամբակուծական տնտեսությունների աշխատանքների մեջ արմատավորելու նպատակով, խորհրդակցությունը առաջարկում է դաշտային բոլոր աշխատանքները կատարել բրիգադային կարգով: Պրոֆմիությունները, Կոլխոզցենտրը, Հողժողկոմատը և 25-հազարականները ամեն կերպ պետք է աջակցեն Կոլխոզցենտրին և սովխոզներին կազմակերպել հարվածայնություն և սոցիալիստական մրցություն և հանդիպական ցանքսային պլաններ, բուքսիրներ՝ հետ մնացողների համար, քաշելով այդ գործի մեջ և անհատական չքավոր ու միջակ տնտեսություններին, օգնել նրանց աշխատանքի հասարակ ձևերը կազմակերպելով (արտելներ, բրիգադներ և այլն):

7) Գյուղատնտեսական կամպանիայի կարևոր հարցերի պլանային կարգով մշակելու և կիրառելու և կոլխոզային—սովխոզային ամբողջ ակտիվին արտադրական պլանների իրագործման մեջ գրավելու համար, Կոլխոզցենտրը գյուղատնտեսական բանվորների միության հետ պետք է կոլխոզներում արտադրական խորհրդակցություններ կազմակերպի, դրա մեջ գրավելով վոչ միայն բանվորներին, այլ և ագրոնոմներին, ուսուցիչներին և գյուղի մյուս կուլտուրական ուժերին:

8) Խորհրդակցությունը բոլոր կազմակերպությունների առանձին ուշադրությունն է դարձնում Ադրբեջանում նոր կազմակերպվող 14 մեքենա-տրակտորային կայաններում բանվորների աշխատանքը կանոնավորելու և մեքենաների բեռնավորելու խնդրի վրա: Խորհրդակցությունը անհրաժեշտ է համարում, որ բոլոր տրակտորային կոլոնաները և նրանց սպասարկող բանվորական ուժը 2 կամ 3 հերթի աշխատեն և առաջարկում է Հողժողկոմատին, Տրակտորցենտրին և Կոլխոզցենտրին, լրիվին ապահովել նրանց կցորդ ինվենտարով և վառելիքով:

9) Բոլոր սովխոզներում ու կոլխոզներում մտցնել մշտական մրցանակաբաշխման (պրեմիալ) սիստեմ՝ խրախուսելու բրիգադներին՝ դաշտերը լավագույն կերպով մշակելու և ուրիշ ցուցանիշների համար, տրակտորիստներին՝ առանց վերանորոգումների երկար ժամեր աշխատելու համար: Սովխոզցենտրը, Տրակտորցենտրը և Կոլխոզցենտրը դրա համար պետք է մրցանակաբաշխության հատուկ ֆոնդեր կազմեն:

10) Առաջարկել Աշխժողկոմատին, Հողժողկոմատին և Կոլխոզցենտրին կարճատև դասընթացքների միջոցով բատրակներից ու չքավորներից տրակտորի ղեկավարներ պատրաստել: Դրա հետ միասին Աշխժողկոմատը գյուղատնտեսական տեսուչների միջոցով պետք է հաջողեցնի կոլխոզներում և սովխոզներում աշխատանքի պաշտպանության կանոնավորումը:

11) Ադրպրոֆխորհուրդը և ռայոնական պրոֆխորհուրդները պետք է միջոցներ ձեռք առնեն կոլխոզների հաշվեպահական աշխատանքներն ամրացնելու համար, կոլխոզներ ուղարկելով Բաքվից և ռայոնական



կենտրոններից հաշվետարներ, միաժամանակ այս տարի հատուկ դասընթացքների միջոցով՝ կոլխոզնիկների լավագույն մասից հաշվետարներ պատրաստել, այդ դասընթացքների կազմակերպելու գործում մասնակցելու քաշելով տնտեսորգաններին և պրոֆմիություններին:

12. Ադրպրոֆխորհուրդը պետք է աշխատի, որ պետքի լրիվին իրագործվի կուսակցության որոշումը քաղաքի գյուղատնտեսական մասնագետների 60%-ից ոչ պակասը ռայոններն ուղարկելու մասին: Միաժամանակ պետք է վերականգնել գյուղատնտեսական բարձրագույն դպրոցների ուսանողների արտադրական պրակտիկան այն հաշվով, որպեսզի նրանք այդ անցնեն ցանքսի և հնձի կամպանիայի ժամանակ:

## Առողջապահության բնագավառում

205.000 հեկտար բամբակի պլանի իրագործումը ապահովելու նպատակով, խորհրդակցությունը անհրաժեշտ է համարում հետևյալ միջոցառումներն անցկացնել.

1) Բամբակի գարնանային ցանքսի կամպանիայի ժամանակ Առողջժողկոմատը Բաքվից բամբակային ռայոններն է ուղարկելու 23 բժշկական խմբից ոչ պակաս, Ադրբեջանի միջռայոնական կենտրոններից ոչ պակաս 14 խումբ, մայրության և մանկան պաշտպանության ինստիտուտից—2 խումբ և բժշկական ինստիտուտից—2 խումբ՝ կազմի մեջ ունենալով մի բժիշկ, քույր, մանկաբարձուհի և մեկ սանիտար:

2. Առողջժողկոմատը բամբակային գարնանային ցանքսային կամպանիայի ժամանակ, բացի շրջիկ բժշկական խմբերից, Առողջբաժնից պետք է շրջիկ բժիշկներ վերցնի, միաժամանակ Առողջբաժնի տեղական

բժիշկներին ամրացնելով շրջակա ռայոններին սպասավարելու համար—անպայման տեղերը մեկնելու պարտականությունը դնելով նրանց վրա, բամբակային ռայոնների սանիտարական սպասարկման աշխատանքները տանելու համար:

3. Մեկնող բժշկական խմբերի համար, խորհըրդակցությունը անհրաժեշտ է գտնում Առողջժողկոմատի գծով Բագվում հատուկ ընդհանուր հրահանգչական դասընթացքներ կազմել, իսկ ռայոններում կազմակերպչական աշխատանքներ տանելու և բժշկական խմբի ղեկավարելու համար ի հաշիվ Առողջժողկոմատի ընտրել 5 տեսուչներ:

4. Բամբակային ռայոններում մալյարիայի դեմ հաջող կերպով պայքար մղելու նպատակով, գարնանային ցանքսային կամպանիայի ընթացքում ի հաշիվ Առողջժողկոմատի Աղդամի, Բարդայի և Աղ-Սույի ռայոններում կազմակերպել տրոպիկական կայաններ՝ ստացիոնարով, Ղազախում, Թառթարում, Դալ-Մամեդլվում, Սաբիր-Աբաթում, Նորաշենում և Նախիջևանի հանրապետությունում մալյարիայի կայաններ, իսկ բամբակի մյուս բոլոր ռայոններում—մալյարիայի կետեր:

5. Բամբակի գարնանային ցանքսային կամպանիայի մեջ 30% կանանց աշխատանքի գործադրելու հետ, մանկական հիմնարկությունների անհրաժեշտ ապահովություն է պահանջվում: Խորհրդակցությունը անհրաժեշտ է գտնում՝ Առողջժողկոմատի գծով, մանկական հինգ նոր կոնսուլտացիա բացել—Կարագոնլուի, Ալի-Բայրամլուի, Կարա-Չալայի, Աղջաբաթի և Քյուրդամիրի ռայոններում և կոլխոզներում՝ 24-ից վոչ պակաս սկզբնական կետեր՝ վորպես մանկական նորմալ կոնսուլտացիայի մասնաճյուղեր և ամեն մի ռայոնում 1-ից վոչ պակաս մանկական հրապարակ:



6. Բացի Առողջժողկոմատի մասնակցությունից, խորհրդակցությունը անհրաժեշտ է գտնում նույնպես «Կարմիր Կիսալուսին» ընկերության գծով բամբակային ռայոններն ուղարկել 8-ից վոչ պակաս բժշկական խմբեր, վորը կազմակերպված լինեն Առողջժողկոմատի խմբերի ձևով և կազմակերպել 2-ից վոչ պակաս պրիմիտիվ կոնսուլտացիաներ Խինդիրիստանի, Շամախու, Թաուզի ռայոններում, Նախիջևանի հանրապետությունում, Սեդերեկում և Նորաշենում:

7. Առողջժողկոմատն ու «Կարմիր Կիսալուսինը» բացի բամբակային ռայոնները սպասարկելուց, փետրվարի 15-ից վոչ ուշ պետք է կոնկրետ պլան մշակեն վոչ-բամբակային ռայոնների կոլխոզների, Ադրբեջանի բոլոր ռայոնների բատրակների ու կոլխոզնիկների սպասարկելու համար, և այդ պլանը պետք է ներկայացնեն Ադրպրոֆխորհրդի հաստատության:

---

# ԲԱՄԲԱԿԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՑԱՆՔՍԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Չնայած կուսակցության և խորհրդային հիմնարկների մի շարք դիրեկտիվներին, բամբակի գարնանային ցանքսային կամպանիան և արդյունաբերական ապրանքներով ու հասարակական սննդով ապահովելու համար, Ազերխտարիֆակը նախապատրաստական շատ քիչ աշխատանք է տարել բամբակի գարնանային ցանքսային կամպանիայում յեղած բանվորներին բանվորական մատակարարումով լիովին ապահովելու գործում (սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային կալոնաների 30 հազար բանվորներից միայն 15.000 հոգին է ապահովված)։*

*Դրա հետ միասին պետք է նկատել Ազրբեջանի Մատակարարման Ժողկոմատի ծայրահեղ անթույլատրելի վերաբերմունքը՝ տվյալ հարցի վերաբերմամբ կուսակցության և կառավարության դիրեկտիվների իրագործման խնդրում, վորը արտահայտվել է բամբակի գարնանային ցանքսային կամպանիային մթերքների և արդյունաբերական ապրանքների մատակարարման համար նախապատրաստական վորևէ աշխատանքի ու պլանի քննության բացակայությամբ։*

*Խնդրել Բան.-Գյուղ, Տեսչությանը քննել տվյալ գործը և մեղավորներին պատասխանատվության կանչել։*



*Բամբակային գարնանային ցանքսային կամպանիայում զբաղված բանվորներին առանց ընդհատումների բանվորական մատակարարումով ապասարկելու նպատակով, անհրաժեշտ համարել հետևյալ միջոցառումները.*

*1. Առաջարկել Ազերխտարիֆակին.*

*ա) լիովին ապահովել սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային կալոնաների բանվորներին՝ թվով 15.000 մարդ (ընտանիքներով) մթերքներով ու արդյունաբերական ապրանքներով, վորի համար ոգտագործել 210 հազար ռուբլի առանձնացրած ֆոնդը և բացի դրանից լրացուցիչ ավելացնել այդքան գումարի ապրանք՝ գյուղի ընդհանուր ֆոնդից.*

*բ) շտապ կերպով վճռել՝ սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային կալոնաների մնացած 15,000 բանվորներին գոյություն ունեցող նորմաներով ապահովելու համար լրացուցիչ ֆոնդ կազմելու հարցը (տվյալ 15,000 բանվորները հանդիսանում են սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային կալոնաների նախագծված աճումը) և այդ ֆոնդը մինչև 750 հազար ռուբլի հասցնելու հաշվով.*

*գ) քանի վոր Ազերխտարիֆակը լրիվ չի ապահովված կրուպայի ու մակարոնի կենտրոնացրված ֆոնդերով, նույնպես և մսով, բրնձով ու բուսական յուղով, հարցը դնել Ազրբեջանի Մատակարարման Ժողկոմատի առաջ՝ տվյալ ֆոնդերի առանձնացնելը շտապ կերպով ձևակերպելու համար.*

դ) ի գիտություն առնել Ազերիտիֆտկի տեղեկությունը, որով նա հաղորդում է, որ Ազվոդխոզի, Փամբուղբիրլիգի, Հողժողկոմատի բանվորներն ու բամբակի գարնանային ցանքային կամպանիայում զբաղված բանվորական բրիգադները լրիվին ապահովված են մթերքներով և արդյունաբերական ապրանքներով.

յե) անհրաժեշտ համարել խիստ կերպով պահպանել սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների, մեքենա-տրակտորային կալոնաների, կոլխոզնիկներին մատակարարման առաջնահերթությունը, միևնույն ժամանակ ուշադրությունը չթուլացնել չըքավոր-միջակային անհատական բամբակային տնտեսությունների մատակարարման գործին, առանձին ուշադրություն դարձնելով ապրանքների այն շրջիկին, որը համապատասխանում է սպառողներին պահանջին.

զ) 150.000 ռուբլու ֆոնդ առանձնացնել պրեմիաներ տալու կոլխոզներից ու անհատական տնտեսություններից նրանց, որոնք սոցմրցությամբ բամբակի արտերը հերկելիս լավագույն որակական և քանակական թվեր են ցույց տվել, և ժամանակից առաջ կատարել են տրված առաջադրությունը (70% կոլխոզների և 30% անհատական տնտեսությունների համար) և 100.000 ռուբլի սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային կալոնաների հարվածայիններին պրեմիա տալու համար.

է) տրակտորները վառելիքով ապահովելու համար՝ առաջարկել Ազերիտիֆակին տեղերում սարքավորել համապատասխան թվով ռեզերվուարներ՝ նավթամթերքները պահելու համար (21-ից ոչ պակաս).



ը) կազմակերպությունների պահանջով ապահովել գործածվելիք չափով նավթամթերքների ներմուծումը տրակտորներին մատակարարելու համար.

թ) հրահանգելու համար հրահանգիչներ ուղարկել բամբակային բոլոր ռայոնները, որտեղ գոյություն ունեն սովխոզներ, մեքենա-տրակտորային կայաններ և մեքենա-տրակտորային կալոնաներ ու խոշոր կոլխոզներ՝ և հսկել վերևում թված բոլոր բանվորների կանոնավոր և առանց ընդհատումների մատակարարման գործին.

ժ) հանձնարարել Ադրբեջանի Մատակարարման Ժողկոմատին, իր գյուղային միացումների գծով (Սոյուզմյասո, Սոյուզրիբա, Սոյուզխլեբ) առանձնացնել և ապահովել Ազերիտիֆակին ստանալու ցանքային կամպանիայի ժամանակ անհրաժեշտ պլանով նախատեսված քանակությամբ սննդի մթերեղեն, ինչպես բանվորական մատակարարման համար, նույնպես և սովխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում, ու մեքենա-տրակտորային կալոններում հասարակական սնունդ կազմակերպելու համար (միս, ձուկ, ալյուր, յուղ, մակարոն, կրուպաներ, կարտոֆել և բանջարեղեն)։

## Հասարակական սնունդը

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումի դիրեկտիվները՝ անհատական բանվորական մատակարարումից հասարակական սննդի անցնելու անհրաժեշտության մասին՝ առանձին սուր քաղաքական նշանակություն և ստանում գարնանային ցանքային կամ-

պանիայի ժամանակ. ելնելով դրանից, առաջարկել վորպեսզի հասարակական սննդի գծով տարվեն հետևյալ գործնական միջոցառումները.

1. Առաջարկել Ազերխոտիփակին, Ադրբեջանի Մատակարարման Ժողկոմատին և Վսենարպիտին, հասարակական սննդի համար ամուր ֆոնդեր ձեռք բերել, ապահովելով սովխոզների, մեքենա-տրակտորային կայանների և մեքենա-տրակտորային կոլոնաների, կոլխոզների, բանվորական բրիգադների և բանվորական այլ օջախների՝ ուր կենտրոնացված են 50 հոգուց վոչ պակաս բանվորների խմբեր—անընդհատ մատակարարումը, կազմակերպել դաշտային սնունդ սովխոզներում և կոլխոզներում և թեյատներ՝ Փամբուղբիրլիգի ցույց տված բոլոր գնդական կետերում:

2. Առաջարկել Վսենարպիտին և Ադրբեջանի Մատակարարման Ժողկոմատին վճռական միջոցներ ձեռք առնել Ազերխոտիփակի կողմից ինվենտարի, սարքավորումների և ամանեղենի համար ներկայացրած պահանջները բավարարելու, իսկ վերջինս միջոցներ ձեռք առնի ցանցին մատակարարելու տեղական հնարավորություններից ստացված ինվենտարով ու սարքավորումներով:

3. Առաջարկել Հողժողկոմատին և Կոլխոզցենտրին 5 օրվա ընթացքում Ազերխոտիփակին ներկայացնել այն հիմնարկների ցուցակները և բանվորների թիվը, վորոնք հառաջիկա 3 ամսվա ընթացքում ենթակա են հասարակական սննդով սպասարկվելու:

4. Հողժողկոմատը պիտի վճռական կարգադրություն անի բոլոր տնտեսական և կառուցողական կազմակերպություններին.



ա) ճաշարաններ սարքավորել այն սովխոզներում, խուտորներում, մեքենա-տրակտորային կայաններում և բանվորական այն օջախներում, ուր ներկայումս այդպիսին գոյություն չունի.

բ) վերասարքել գոյություն ունեցող ճաշարաններն ու խոհանոցները՝ ու ճաշ բաց թողնելու հնարավորությունը մինչև պահանջված չափի հասցնել.

գ) անհրաժեշտ վերանորոգումներ կատարել գոյություն ունեցող ճաշարաններում Բան.-Գյուղ. Տեսչության, Աշխժողկոմատի, պրոֆկազմակերպությունների բրիգադաների և հանձնաժողովների բազմիցս անգամ արած առաջարկությունների համապատասխան.

դ) այնտեղ, վորտեղ գոյություն չունի հացթուխարան, անմիջապես կառուցել այն, գոնե ժամանակավոր, թեթև ձևի.

յե) արագացնել Կարա-Չալայի սովխոզի հացթուխարանի կառուցումը, նրա գործի գցելու համար վերջնական ժամկետ նշանակելով 1931 թվի փետրվարի 25-ը.

զ) առաջարկել սովխոզներին, վորոնք զինվորական խոհանոցներ ունեն, հանձնել կոոպերատիվներին, դաշտը կերակուր հասցնելու համար.

է) առաջարկել բոլոր սովխոզներին, մեքենա-տրակտորային կայաններին, կառուցողական և այլ տնտեսական կազմակերպություններին, ապահովել տրանսպորտի միջոցներով՝ հացը և կերակուրը դաշտ տեղափոխելու համար:

5. Առաջարկել Ժողսննդի միության կենտրոնական վարչությանը Ազերխոտիփակի հետ միասին հիմ-

նական բամբակային ռայոններն ուղարկել Ժողսննդի և Բանկոոպի աշխատավորներից 10 բրիգադ՝ ստորին կոոպերացիային գործնական աջակցություն ցույց տալու համար և սովխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում և կոլխոզներում դաշտային և ստացիոնար սնունդը կազմակերպելու համար։

6. Բամբակային գարնանային ցանքսային կամպանիայի մեջ զբաղված բանվորներին լավագույն կերպով մթերքներ ու արդյունաբերական ապրանքներ և հասարակական սնունդ մատակարարելու համար ֆոնդերը կանոնավոր առանձնացնելու, պահանջվող ֆոնդերը ստանալու համար ժամանակին միջոցներ ձեռք առնելու և նրանց իր ժամանակին ուղարկելուն հսկելու, տեղական գնումներ կատարելու և պատվերների, պահանջների ու նրանց կատարումը հաշվետվելու նպատակով—Ազերբխոիֆակը պիտի ընտրի մի պատասխանատու կատարածու, վորի վրա պատասխանատվություն պիտի դնել՝ տվյալ հարցերի վերաբերյալ վերահիշյալ միջոցառումները լրիվին կատարելու։

7. Ագրոպրոֆխորհրդի սոցկենցաղի սեկտորը և գյուղատնտեսական բանվորների միությունը սույն տարվա մարտի 1-ից վոչ ուշ պիտի ստուգեն գարնանացանի կամպանիայի ընթացքում զբաղված բանվորներին մատակարարման համար առաջարկված միջոցառումների կատարման չափը։

---

## ԲԱՄԲԱԿԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պրոֆմիությունների կուլտուր-քաղաքական աշխատանքը պետք է մոբիլիզացիայի յենթարկվի պայքարելու Խորհրդային Միության բամբակային անկախության, 205,000 հեկտար բամբակի, Ադրբեջանի բամբակային ռայոնների 50% կոլեկտիվացնելու համար։

Յելնելով դրանից, իրականացնել հետևյալը.

### Ագրոպրոֆխորհրդի յեվ միությունների կենտրոնական վարչությունների գծով

1) Բոլոր ռայոնական պրոֆխորհուրդներին գյուղի սոցիալիստական շինարարության հարցերին նվիրված հատուկ գրադարաններ ուղարկել՝ իրենց ռայոնին մատակարարելու համար։

2) ՌԴՍԿ միջոցով բամբակային ռայոնները ուղարկել 2 կինո-ֆոտո բրիգադաներ։

3) Ագիտ-գեղարվեստական բրիգադներ ուղարկել բամբակային ռայոնները (10-ից վոչ պակաս)։

4) Պլակատ հրատարակել՝ վորը բամբակի համար պայքարելու մոբիլիզացիա կատարի։

5) Բամբակային ռայոններում ռադիոֆիկացիայի մասին յեղած վորոշումները իրագործել։

6. Բամբակային ռայոններն ուղարկել մեկ ռադիո-մասնագետ ռադիոներին հսկելու և նորոգելու համար։

7) Կազմակերպել բամբակային հարցերին նվիրված լայն ռադիո-հաղորդում։

8) Մշտական աշխատանքներ տանելու համար 5 կուլտ-աշխատավոր ուղարկել խոշոր կոլխոզները, սովխոզները։

9) Բոլոր ակումբներում, անկյուններում և գրադարաններում բամբակի հարցերին նվիրված մասսայական բացատրական աշխատանքներ ծավալել։

## Ռայոնական պրոֆխորհուրդների գծով

1) Գրականություն ուղարկել բոլոր ստորին կազմակերպություններին այնպես, վորպեսզի նրանք բաժանվեն կոլխոզներին, սովխոզներին և բանվորներին։

2) Գյանջայի ռայոնական պրոֆխորհուրդը Գյանջայի ակումբի ուժերով 2 գեղարվեստական ագիտ-բրիգադներ կազմի՝ իր ռայոնը սպասարկելու համար։

3) Բամբակի հարցերին նվիրված մասսայական բացատրական աշխատանք ծավալել անկյուններում, ակումբներում և խրճիթ-ընթերցարաններում։

4) Կազմակերպել ագիտ-սայլեր (վորը բաղկացած և լինելու զեկուցողից, զրուցողից, գեղարվեստական բաժնից) անմիջապես դաշտերում սպասարկելու համար։

5) Կարմիր Բանակի XIII տարեդարձը լուսաբանելու աշխատանքը շաղկապել գարնանային ցանքսի խնդիրների լուսաբանելու հետ, կազմակերպել Կարմիր Բանակի մասերի ու կոլխոզնիկների, սովխոզնիկների ու բանվորների հանդիպումներ։ Այդ հանդիպումների ժամանակ լսել սովխոզների, կոլխոզների զեկուցում-

ՀՀ Ազգային գրադարան
NL0193108